Առաջարկ

«Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է **«Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը հաստատելու մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի վերաբերյալ առկա է հետևյալ նկատառումը.

1. Նախագծի 1-ին մասով նախատեսվում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավել մինչև երեք միջազգային փորձագետների: Նույն կարգի 3-րդ մասի համաձայն՝ խորհրդի կազմում փորձագետների թեկնածություններն առաջադրվում են վերջին երկու տարվա ընթացքում ՀՀ հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների կողմից: Հարկ է նշել, որ որևէ կերպ հիմնավոր չէ այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ թեկնածություն կարող է առաջադրել բացառապես վերջին երկու տարում ՀՀ հետ համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունները: Նման մոտեցման պարագայում առերևույթ ձևակերպվում է նախագծի հեղինակների ցանկությունը՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության հարցում համագործակցել 2018թ. հեղափոխությունից հետո հակակոռուպցիոն պայքարի ոլորտում ՀՀ հետ համագործակցած միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունների հետ, ինչը որևէ հիմնավորում չունի:

Առաջարկ.

Նախագծի 3-րդ մասում հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետներ առաջադրելու իրավունք ընձեռել վերջին 10 տարում ՀՀ հետ հակակոռուպցիոն պայքարի ոլորտում համագործակցած միջազգային կամ միջկառավարական կազմակերպություններին: